Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թ.
հոկտեմբերի 1-ի նիստի N 44
արձանագրային որոշման

**ՑԱՆԿ**
**ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Պատասխանատու կատարողը | Ակնկալվող արդյունքները | Կատարման ժամկետը | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|
| **1.** | Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի 6 մանկատանը կխնամվի 660 երեխա | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 2 075 452.2 հազ. դրամ |
| 2. | ՀՀ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաններին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում) և հաստատություններ երեխաների մուտքը կանխարգելելու ծառայություններ | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ծրագրի շրջանակում ընտանիք կվերադառնա 40 երեխա, կկանխարգելվի 60 երեխայի մուտքը հաստատություններ | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 22 570.2 հազ. դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | ՀՀ մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ծրագրի շրջանակներում աջակցություն կտրամադրվի 9 շահառուի | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 16 094.2 հազ. դրամ |
| 4. | Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների երեխաներին սոցիալական ծառայությունների տրամադրում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի երեխաների սոցիալական հոգածության 3 կենտրոնում 300 երեխայի կտրամադրվեն համապատասխան ծառայություններ | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 238 773.5 հազ. դրամ |
| 5. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան 20 երեխայի կտրամադրվի մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 39 621.8 հազ. դրամ |
| 6. | Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններ | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի 7 գիշերօթիկ հաստատությունում կխնամվի 730 երեխա | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 996 332.6 հազ. դրամ |
| 7. | Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվարին իրավիճակում հայտնված | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տավուշի մարզում «Հույսի կամուրջ» ՀԿ-ի 4 ցերեկային կենտրոնում՝ Դիլիջանի, Իջևանի, Նոյեմբերյանի, Բերդի և նրանց | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 73 334.0 հազ. դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ | | հարակից գյուղերի՝ հաշմանդամություն կամ սոցիալ հոգեբանական խնդիրներ և հատուկ կարիքներ ունեցող շուրջ 250 երեխայի մատուցվող ծառայությունների համար կտրամադրվի աշխատավարձ, ներառյալ եկամտային հարկը | | |
| 8. | ՀՀ մանկատներում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Մանկատներում խնամվող դպրոցահասակ՝ 7-18 տարեկան 195 երեխայի կտրամադրվի մանր ծախսերի համար նախատեսված գումար /գրպանի ծախս/ | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 5 820.0 հազ. դրամ |
| 9. | Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին բնաիրային օգնության փաթեթի տրամադրում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կենսաբանական 100 ընտանիքի կտրամադրվի բնաիրային օգնության փաթեթ | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 20 403.2 հազ. դրամ |
| 10. | ՀՀ մանկատների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Մանկատների 8 շրջանավարտի տրամադրվի միանվագ դրամական օգնություն | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 400.0 հազ. դրամ |
| 11. | Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Խնամատար ընտանիքումներում կիրականացվի 25 երեխայի խնամքը | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 39 367.1 հազ. դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12. | Հաշմանդամ երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների մատուցում Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 92 ներառական մանկապարտեզում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 24 երեխայի մատուցվող ծառայությունների համար 18 աշխատակցի կտրամադրվի աշխատավարձ, ներառյալ եկամտային հարկը | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 26 385.2 հազ. դրամ |
| 13. | Հայաստանի Հանրապետությունում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառման իրականացում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կապահովվի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառումը | 2016թ. ընթացքում | ֆինանսավորում չի պահանջվում |
| 14. | Հատուկ մանկավարժության և հաշմանդամ երեխաների խնամքի արդի մեթոդաբանության վերաբերյալ վերապատրաստման դասընթացների իրականացում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Մասնագիտացված մանկատներում հաշմանդամ երեխաներին տրամադրվող խնամքի որակը բարելավված է՝ համապատասխան մասնագետների շարունակական վերապատրաստումների արդյունքում | 2016թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 15. | Որդեգրող, որդեգրել ցանկացող ընտանիքների (անձանց) և խնամատար ընտանիքների անդամների (ծնողների ու երեխաների), խնամակալության և | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Որդեգրող և որդեգրել ցանկացող ընտանիքների անդամները ձեռք են բերել համապատասխան հմտություններ, խնամակալության ու հոգաբարձության մարմինների, ինչպես նաև երեխաների խնամքի | 2016թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | հոգաբարձության մարմինների, ինչպես նաև երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների մասնագետների ուսուցողական ծրագրի մշակում և իրականացում | | և պաշտպանության հաստատությունների մասնագետները վերապատրաստված են՝ որակյալ ծառայություններ մատուցելու ուղղությամբ | | |
| 16. | Երեխայի իրավունքների պաշտպանության քաղաքականության իրազեկման աշխատանքների իրականացում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է երեխայի իրավունքների պաշտպանության քաղաքականության իրազեկումը | 2016թ. ընթացքում | ֆինանսավորում չի պահանջվում |
| 17. | Երեխայի հանդեպ բռնության երևույթը բնութագրող տեղեկատվության համակարգի ստեղծում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Երեխայի հանդեպ բռնության երևույթը բնութագրող տեղեկատվության հավաքագրման և փոխանակման կարգերը հաստատված են, տեղեկատվական ներքին համակարգը գործում է | 2016թ. ընթացքում | ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 18. | Երեխաների խնամքի վերաբերյալ մասնագիտական աջակցության կարգի մշակում ու հաստատում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից, որդեգրված և խնամատարության հանձնված երեխաների խնամքի նկատմամբ վերահսկողության իրականացում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական արցերի նախարարություն | Հաստատված են երեխաների խնամքի նկատմամբ վերահսկողության և մասնագիտական աջակցության կարգերը, որդեգրել ցանկացող ու խնամատար ընտանիքներն իրազեկված են կարգերի վերաբերյալ, խնամակալության և հոգաբարձության մարմինների համապատասխան աշխատակիցները իրականացնում են վերահսկողություն՝ երեխաների խնամքի նկատմամբ | 2016թ. ընթացքում | ֆինանսավորում չի պահանջվում |
| 19. | «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության համակարգում անմիջականորեն սոցիալական ծառայություններ տրամադրող մարմինների վերակառուցման, կարողությունների հզորացման ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանի մշակում և հաստատում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Երեխայի իրավունքների պաշտպանության համակարգում անմիջականորեն սոցիալական ծառայություններ տրամադրող հաստատությունների համակարգային բարեփոխումների ուղղությունները սահմանված են, ծրագրով հաստատված միջոցառումներն՝ ըստ ժամանակացույցի իրականացվում են | 2016թ. ընթացքում | ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 20. | «Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին համայնքահեն բազմաբնույթ սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ստեղծման ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին համայնքահեն բազմաբնույթ սոցիալական ծառայությունների տրամադրման ձևերն ու մեխանիզմները սահմանված են, ծրագրով հաստատված միջոցառումներն՝ ըստ ժամանակացույցի իրականացվում են | 2016թ. ընթացքում | ֆինանսավորում չի պահանջվում |
| 21. | Ընտանիքի ու երեխայի իրավունքների պաշտպանության հարցերով իրավասու բոլոր սուբյեկտների (այսուհետ՝ սոցիալական ցանց) արդյունավետ համագործակցության ապահովում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ընտանիքի, խնամակալության ու հոգաբարձության մարմինների և համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների ու երեխայի իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ սոցիալական ցանցը ձևավորված է, համագործակցության մեխանիզմներն արդյունավետ գործում են | 2016թ. ընթացքում | ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 22. | Աշխատող երեխաների վերաբերյալ հետազոտության իրականացում, երեխաների աշխատանքային շահագործման կանխարգելմանն ուղղված առաջարկությունների ներկայացում ՀՀ Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովին | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Առկա է ՀՀ աշխատող երեխաների աշխատանքային շահագործման վերաբերյալ համապարփակ վերլուծական զեկույց | 2016թ. ընթացքում | ֆինանսավորում չի պահանջվում |
| 23. | Հիվանդանոցային բուժօգնության ոլորտում երեխաների առողջության պետական հավաստագրի ծրագրի շարունակական ներդրում | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Յուրաքանչյուր տարի 0-7 տարեկան շուրջ 300 000 երեխա ըստ անհրաժեշտության կստանա մատչելի և որակյալ հիվանդանոցային բուժօգնություն | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 7 595 939.3 հազ. դրամ |
| 24. | Հաշմանդամ երեխաների համակարգված բուժօգնության և սպասարկման բարելավման ծրագրեր և միջոցառումներ: Վերականգնողական մարզային կենտրոնների ծրագրի ընդլայնում: | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | հաշմանդամ երեխաների համար վերականգնողական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացում | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 249 863.0 հազ. դրամ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 25. | Ծննդօգնության պետական հավաստագրի ծրագրի շարունակական ներդրում | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Տարեկան շուրջ 50 000 կին կստանա ծննդօգնության մատչելի և որակյալ ծառայություններ | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 6 945 253.8 հազ. դրամ |
| 26. | «Մանկանը բարեկամ» նախաձեռնության շարունակական ներդրում | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Վաղ հասակի երեխաների սնուցման կազմակերպման գործընթացը բարելավված է՝ բացառապես կրծքով սնուցման ցուցանիշն աճել է 15 տոկոսով: | 2016թ. ընթացքում | օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 27. | Նյութափոխանակության ժառանգական հիվանդությունների և բնածին այլ շեղումների հայտնաբերմանն ուղղված նորածնային սկրինինգ ծրագրերի շարունակա-կանության ապահովում և ընդլայնում | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Ժառանգական և զարգացման բնածին ախտաբանություններով պայմանավորված հաշմանդամության կրճատում 5 %-ով | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 220 000.0 հազ. դրամ, օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 28. | Հանրապետության բոլոր մարզերում նախադպրոցական ծառայությունների ցանցի ընդլայնում՝ դպրոցին երեխաների պատրաստվածության | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն Երևանի քաղաքապետարան ՀՀ մարզպետարաններ | Նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրան քային և ծախսարդյունավետ մոդելների ներդրման միջոցով ՀՀ մարզերում ընդգրկվել է շուրջ 6953 երեխա, այդ թվում՝ <<Կրթության բարելավում>> | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 687 691.6 հազ.դրամ, օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | մակարդակի բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման նպատակով | | վարկային ծրագրի նախադպրո ցական միկրոծրագրերի շրջանակներում ընդգրկվել է 1142 երեխա,<br>ՀՀ պետական բյուջեի միջոց ներով՝ ՀՀ մարզերում նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվել է 5811 երեխա | | |
| 29. | Նախադպրոցական կրթության չափորոշիչների հիման վրա ուսումնամեթոդական ձեռնարկների մշակում և հրատարակում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Կապահովվի նախադպրոցական կրթության մատչելիությունը: | 2016թ. ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 30. | Հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և կրթության մեջ ներառման մեխանիզմների մշակում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներին կրթության մեջ ներառում | 2016թ. ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 31. | Հոսքային ուսուցման կազմակերպում՝ սովորողների նախասիրություններին և հակումներին համապատասխան | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Հանրապետության առանձին գործող ավագ դպրոցներում և միջնակարգ դպրոցների 3-րդ աստիճանում իրականացվում է հոսքային ուսուցում՝ հումանիտար, բնագիտամաթեմատիկական, արհեստագործական և ընդ հանուր հոսքերում: Կազմված են ավագ դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի շրջանակում դասավանդվող լրա-ցուցիչ առարկայացանկի չմշակված առարկայական ծրա-գրերը /դասընթացները/ | 2016թ. ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 32. | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման չափորոշիչների մշակում՝ Համաշխարհային առողջապահական կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման հիման վրա | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Առկա են կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման չափորոշիչները, երեխաների գնահատումն իրականացվում է նշված չափորոշիչների հիման վրա | 2016թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 33. | <<Ներառական կրթություն>> ծրագրի իրականացում 159 դպրոցներում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն<br>Երևանի քաղաքապետարան<br>ՀՀ մարզպետարաններ | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ապահովվել է կրթության մատչելիություն և հավասար պայմաններ, մտավոր և ֆիզիկական զարգացման խնդիրներ ունեցող շուրջ 5000 երեխաների կրթությունը կազմակերպվել է հանրակրթական դպրոցներում: Ներառական կրթություն իրականացնող դպրոցների համա-պատասխան մանկավարժները վերապատրաստվել են: | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝<br>3 108 222.6 հազ. դրամ |
| 34. | Երեխայի կրթական կարիքների գնահատման եռաստիճան համակարգի ներդրում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | <<Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի>> ներդրում, հատուկ կրթության համակարգի բարեփոխում, անցում համընդհանուր ներառական կրթության համակարգին | 2016թ. ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 35. | Դպրոցական օլիմպիադաների կազմակերպում (16 առարկաներից՝ հանրապետական և 8 առարկաներից՝ միջազգային օլիմպիադաների մասնակցություն) | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Հանրակրթական դպրոցների աշակերտների համար կազմակերպվել են հանրապե-տական օլիմպիադաներ 16 առար-կաներից, իսկ լավագույնները մասնակցել են միջազգային օլիմպիադաների 8 առարկաներից | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝<br>64 688.0 հազ. դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 36. | Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Հանրակրթական դպրոցների 72000 աշակերտների համար անցկացվել են ամենամյա հանրապետական սպորտային խաղեր 9 մարզաձևերով: Մարզական խաղերի մարզային և հանրապետական փուլերին մասնակցել են 3196 աշակերտներ: | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 35 000.0 հազ. դրամ |
| 37. | Հանրակրթական դպրոցներում <<Առողջ ապրելակերպ>> դասընթացի իրականացում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Հանրակրթական դպրոցների 8-11-րդ դասարաններում սովորողների համար անցկացվել են առողջ ապրելակերպի դասընթացներ, սովորողները ձեռք են բերել կյանքի հմտություններ: Դասընթացը վարող ուսուցիչներին սեմինար-խորհրդակցությունների միջոցով ցուցաբերվել է մասնագիտական և մեթոդական աջակցություն: | 2016թ. ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 38. | Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Ամառային ճամբարներում կազմակերպվել են սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 4500 երեխաների ամառային հանգիստը | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 450 198.0 հազ.դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 39. | Սովորողների մասնագիտական կողմնորոշման նպատակով համապատասխան մանկավարժ ների վերապատրաստում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | Հիմնական և ավագ դպրոցների դասղեկներին ցուցաբերվել է համապատասխան մեթոդական աջակցություն | 2016թ. ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 40. | «Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային, փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի իրականացում | Երևանի քաղաքապետարան ՀՀ մարզպետարաններ | ՀՀ 148 երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, փողային և լարային նվագարանների բաժին-ների 2361 սովորող կստանա ուս-ման վարձավճարների փոխհա-տուցում, ինչը կնպաստի գեղար-վեստական կրթության մատչելիության ապահովմանը, կրթական հաստատությունների պահպանմանը և մշակույթի ոլոր-տի հետագա մասնագետներով համալրմանը | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 629 766.0 հազ. դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 41. | «ՀՀ-ում շնորհալի պատանի երաժիշտկատարողների մասնագիտական կարողությունների զարգացում և կատարելագործում» նպատակային ծրագրի իրականացում | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Շնորհալի երեխաների բացահայտման և հետագա ուսուցման գործընթացի կազմակերպումը կապահովի մասնակիցների պրոֆեսիոնալ աճ և զարգացում, միջազգային ասպարեզում և մշակութային շուկայում հայ կատարողական արվեստի մրցունակության ապահովում | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 15 926.6 հազ. դրամ |
| 42. | Պատանի ստեղծագործողների համար մրցույթների փառատոների, ցուցահանդեսների կազմակերպում, այդ թվում՝ «Վերածնունդ» պատանի երաժիշտկատարողների միջազգային մրցույթփառատոն, «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական մրցույթ | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Պատանի ստեղծագործողների համար մրցույթների փառատոների, ցուցահանդեսների կազմակերպմամբ կբացահայտվեն շնորհալի երեխաներ, որոնց հետագա ուսուցման գործընթացում և ստեղծագործական գործունեությանը կցուցաբերվի աջակցություն | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 9 000.0 հազ. դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 43. | Մանկապատանեկան թատրոնների զարգացման նպատակային ծրագրեր, այդ թվում՝ «Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային միջազգային փառատոն | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | «Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային միջազգային փառատոնի անցկացումը կնպաստի մանկապատանեկան թատրոնի զարգացմանը, շնորհալի երեխաների հայտնաբերմանը և ստեղծագործական գործունեության խթանմանը | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 3 900.0 հազ. դրամ |
| 44. | «Աջակցություն գրականության հրատարակմանը» ծրագրի շրջանակներում «Մանկապատանեկան գրականություն» ենթածրագրի իրականացում՝ մանկական գեղարվեստական գրքերի հրատարակման, գրադարանային ֆոնդերի | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Մանկական գրականության հրատարակումը կնպաստի մանուկների աշխարհայացքի ձևավորմանը, հայրենասիրական դաստիարակությանը, ազգային և համամարդկային արժեքների սերմանմանը, գրադարանների մանկական գրականության համալրմանը | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե «Աջակցություն գրականության հրատարակմանը» ծրագրի շրջանակներում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | համալրման նպատակով | | | | |
| 45. | «Ռոլան» մանկապատանե-կան ֆիլմերի միջազգային փառատոն | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարություն | Փառատոնը կնպաստի մանկական կինոյի զարգացմանն ու հանրահռչակմանը, երեխաների հայրենասիրական դաստիարակությանը և աշխահայացքի ընդլայնմանը, ժամանցի և հանգստի կազմակերպմանը: | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 6 300.0 հազ. դրամ |
| 46. | Պետական աջակցություն հատուկ կարիքներով, սոցիալապես անապահով երեխաներին մշակութային մասնագիտական ուսուց-ման և գեղագիտական դաստիարակության ոլորտում՝ արվեստների և արհեստնե-րի ուսուցում: | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | ՀՀ մշակույթի նխարարության «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության արդյուն-քում Երևանի 5, Վանաձորի 2, Գյումրու 2, Սպիտակի, Գավառի, Ստեփանավանի մասնաճյու-ղերի գիշերօթիկ հատուկ դպրոց-ներում հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ավելի քան 614 երեխաներ կըստանան արվեստների և արհեստների ու-սուցում: | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 105 286.5 հազ. դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 47. | «Դպրոցականի ֆիլհարմոնիա» դաս-ծրագրի իրականացում | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Ճանաչողական, բացատրական համերգների միջոցով երեխաների գեղագիտական դաստիա-րակության, աշխարհայացքի ընդլայնման և վաղվա բարձրաճաշակ ու գրագետ ունկնդրի դաստիարակում: | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 23 746.0 հազ. դրամ |
| 48. | «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամի գործունեության իրականացում | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժների և սովորողների մասնագիտական ունակությունների զարգացման նպատակով ուսումնամեթոդական և գործնական աջակցության ցուցաբերում: | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 77 595.0 հազ. դրամ |
| 49. | Մանկական մուլտֆիլմերի նկարահանում | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Մանկական կինոյի զարգացում | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 111 096.6 հազ. դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 50. | «Երեխաների և պատանիների համար գիտաճանաչողական ուղևորությունների կազմակերպում» ծրագրի իրականացում | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարութուն | Երեխաների և պատանիների գեղագիտական դաստիարակություն և բազմակողմանի զարգացում, արվեստի ճյուղերի հետ շփում | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 6 400.0 հազ. դրամ |
| 51. | «Մենք ենք, մեր մարզը» մանկապատանեկան մարզային մշակույթի օրեր մայրաքաղաքում» ծրագրի իրականացում | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Շնորհալի երեխաների և պատա-նիների ստեղծագործական կարո-ղությունների զարգացում և խթանում | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 900.0 հազ. դրամ |
| 52. | Հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև սոցիալապես անապահով կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ստեղծագործական ներուժի բացահայտման ու ժամանակակից աշխարհում նրանց առավել ամբողջական ինտեգրման խթանման նպատակով «Մանկապատանեկան արվեստի ինտեգրատիվ հանրապետական փառատոնի» իրականացում: | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Հաշմանդամություն ունեցող երեխաների և պատանիների ստեղծագործական ներուժի բացահայտում և խթանում, խոցելի խմբերի երեխաների մշակութային ինտեգրում հասարակությանը, բարոյա-հոգեբանական դրական մթնոլորտի ձևավորում և հասարակական կարծրատիպերի հաղթահարում: | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 2 800.0 հազ. դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 53. | «Մշակութային կազմակերպություն-դպրոց» աբոնեմենտային համակարգի ներդրման ծրագրի իրականացում: | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Դպրոցահասակ երեխաներին և սովորողներին արվեստին հաղորդակցվելու մատչելիության ապահովում: Երեխաների հոգևոր-մշակութային, գեղագիտական դաստիարակության նպատակային ուղղորդում: | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 20 000.0 հազ. դրամ |
| 54. | Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Օրենսդրության և ընթացակարգերի վերլուծության և փորձաքննության վրա հիմնված առաջարկություններ, անչափահասների արդարադատության ցուցանիշների շտեմարանի ստեղծմանն ուղղված գործողությունների ծրագիր, անչափահասների հետ աշխատող մասնագետների կարողությունների զարգացում | 2016թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 55. | Անչափահասների արդարադատության հարցերով խորհրդի ստեղծում | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Անչափահասների արդարադատության հարցերով գործող խորհուրդ, որը կխթանի Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հարցերով արդարադատության ոլորտում ծրագրերի իրականացումը, համակարգումը և վերահսկողությունը | 2016թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 56. | Անչափահասների արդարադատության ռեսուրս բաժնի ստեղծում | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Անչափահասների արդարադատության ռեսուրս բաժնի ստեղծում, որն իրականացնելու է արդարադատության մարմիններին առնչվող երեխաների հետ աշխատանքում մասնագիտական ծրագրերի մշակում, հետազոտությունների և ուսումնասիրությունների իրականացում | 2016թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 57. | Վերականգնողական կենտրոնների պահպանման և զարգացման հայեցակարգի մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացում | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Վերականգնողական կենտրոնների պահպանման և գործունեության զարգացման հայեցակարգի ընդունում | 2016թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 58. | Իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության և ուսուցման կազմակերպում | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Հաստատություններում և հաստատություններից դուրս գտնվող իրավախախտում կատարած անչափահասների մշակութային ուսուցում, որը կնպաստի կրկնահանցագործությունների կանխարգելմանը | 2016թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 24 974.7 հազ. դրամ |
| 59. | Գործող համայնքային վերականգնողական կենտրոնների աշխատանքների կազմակերպում | Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանություն | Իրավախախտ անչափահասների շրջանում կանխարգելման աշխատանքների իրականացում | 2016թ. ընթացքում | Միջազգային կազմակերպություններ |
| 60. | Շարունակել բանակցային գործընթացը պատկան մարմինների պատասխանատուների հետ՝ 12-ից 18 տարեկան իգական սեռի դժվար դաստիարակվող, շեղված վարքագծով և հատուկ | Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանություն ն | Վարքի շեղում ունեցող աղջիկների շրջանում վերականգնողական աշխատանքների իրականացում | 2016թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | դաստիարակության կարիք ունեցող անչափահասների համար վերինտեգրման կենտրոնի ստեղծման նպատակով | | | | |
| 61. | ՀՀ տարածքում գործող դպրոցներում կազմակերպել և անցկացնել հանդիպումներ, զրույց-զեկուցումներ | Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանություն | Անչափահասների հանցագործությունների թվի նվազում | 2016թ. ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջում |
| 62. | Շարունակել ավագ դպրոցներում դպրոցական տեսուչների ծրագրի իրականացումը | Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանություն | Աշակերտների իրավական գիտելիքների զարգացում, իրավախախտումների կանխարգելում | 2016թ. ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջում |